ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԱՌԱՔՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՆՈՒՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՍԻՐՈ ԵՎ ՄԻՈՒԹՅԱՆ

Կան խոսքեր, որոնք ասվելով ժամանակի հուզող օրախնդիր հարցերի համար, ժամանակի ընթացքում իրենց նշանակությունը աստիճանաբար կորցնելու փոխարեն ձեռք են բերում մի նոր իմաստ և խորհուրդ: Այս առումով հատկանշական են 12-րդ դարի շնորհազարդ Շնորհալի հայրապետի խոսքերը. «Միութիւն ի կարևորս, ազատութիւն յերկրբայականս և սէր յամենայնի»:

Հիսուս Քրիստոսի հրաշափառ ծննդյան երկրորդ հազարամյակի նախօրեին և Փրկչի ծննդյամբ թվագրվող երրորդ հազարամյակի նախաշեմին բարոյական, սոցիալական և քաղաքական հեղաբեկումներից ալեկոծվող աշխարհում որքա՜ն այժմեական են հնչում այս խոսքերը, որոնք ավելի քան ութհարյուրամյա հեռավորությունից պատգամում են, որ միջեկեղեցական հարաբերություններում ավանդական Եկեղեցիները գործակցեն քրիստոնեական սիրո ոգով, որպես հոգևոր միության շաղախ ունենալով Հիսուսի Ավետարանը, Ընդհանրական Կաթուղիկե Եկեղեցին և համաքրիստոնեական հասկացություններն ու խորհուրդները, և ոչ թե իրարից հեռանան՝ դրանք յուրաքանչյուրի կողմից յուրովի մեկնաբանող ու արտացոլող դավանաբանական ու ծիսական տարբերությունների պատճառով:

Շնորհալու բանաձևային հստակություն և սեղմություն ունեցող այս խոսքերի ոգին էր իշխում Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիյ երկրորդի հետ ունեցած հանդիպման և Հունաց Տիեզերական Պատրիարք Բարթոլոմեոս Ա-ի հրավերով Կ. Պոլիս մեկնելու, ինչպես նաև Փարիզ և Ժնև տրված այցելությունների ընթացքում:

Այսօր ավանդական Եկեղեցիների առավել սերտ գործակցությանն ու փոխհարաբերություններին զգալապես խոչընդոտում են անցյալի դավանաբանական վեճերն ու մեղադրանքները: Դավանաբանական, կանոնական ու վարչական իրավասության որևէ խնդիր սակայն երբևէ չի մթագնել Հայ և Ռուս Եկեղեցիների միջև եղած փոխհարաբերությունները: Արևելյան ու արևմտյան քրիստոնեական աշխարհների միջև եղած պատմական հակադրությունների ընթացքում և «բյուզանդական վեճերի» հորձանուտում մեր երկու Եկեղեցիները երբեք չեն

ալիքվել միմյանց դեմ: Ավելին, նրանց միավորել է հայ և ռուս ժողովուրդների ավանդական բարեկամությունը, զինակցությունը և հոգևոր-մշակութային ընդհանրությունները: Միաժամանակ այսօր երկու Եկեղեցիները դիմագրավում են բոլոր այն բարդություններին և կյանքի առաջադրած խնդիրներին, որոնք ի հայտ եկան Խորհրդային Միության փլուզումից հետո: Շեշտելով հատկապես այս իրողությունը, Գարեգին Ա Վեհափառը Ալեքսիյ Երկրորդին ուղղված իր խոսքում ասաց. «Եղբայրական փոխհարաբերությունների զարգացումը առաջնահերթ անհրաժեշտություն է այս օրերին մանավանդ, երբ մեր երկու երկրները՝ Ռուսիո Դաշնությունը և Հայաստանի Հանրապետությունը, և մեր երկու քույր Եկեղեցիները՝ Ռուս Օրթոդոքս և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիները, դիմագրավում են նոր կացություններ, ազատության պայմանների վերստեղծումով, կացություններ, որոնք պահանջում են, որ մենք գործենք սերտ ներդաշնակությամբ»:

Սույն շրջանակներում երկու երկրների սերտ համագործակցությունը իր արձագանքն է գտնում նաև եկեղեցական բնագավառում: Արցախյան հակամարտության կարգավորման և կողմերի միջև կայուն զինադադարի հաստատման ու պահպանման գործում Ռուսաստանի Դաշնության գործադրած միջնորդական ջանքերին այնուհետև հաջորդեց Ռուսաց Պատրիարքի միջնորդությամբ Մոսկվայում կազմակերպված հանդիպումը Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Կովկասի մուսուլմանների հոգևոր առաջնորդի միջև:

Համայն Ռուսիո Պատրիարքի այցելությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին հատկանշվեց նաև մեկ այլ նշանակալից իրադարձությամբ: Մայր տաճարում Գարեգին Ա Վեհափառի կողմից Նորին Սրբությանը հանձնվեցին Մայր Աթոռում պահվող Անդրեաս առաքյալի մասունքները: Համաձայն եկեղեցական ավանդության, Անդրեաս առաքյալը քարոզել է Սև ծովի ափերին՝ սկյութներին, նաև, ըստ հին ռուսական տարեգրությունների, քարոզել է և Հին Ռուսիայում, հասել մինչև Կիև, որի պատճառով էլ նրա մասունքները առանձնակի նվիրականություն և խորհուրդ են ձեռք բերում հատկապես ռուսական Եկեղեցու համար: Այս իրողությունը երախտագիտության իր խոսքում շեշտեց Ռուսիո Պատրիարքը՝ ասելով, թե օրհնաբեր այս մասունքները կդառնան ռուսական եկեղեցիներում պահվող տարբեր մասունքների պսակը՝ բազմապատկելով ռուս ժողովրդի հոգևոր ցնծությունը և ուրախությունը:

Ի տարբերություն Ռուս Եկեղեցու հետ հարաբերությունների, որոնք չեն խոռվվել որևէ միջադեպով ու խնդրով, Հունաց Եկեղեցու հետ դարերի ընթացքում որոշակի բարդություններ են եղել, որոնք այսօր վերածվել են պատմության դառը դասերի, դասեր, որոնք ուսուցանում

են, որ քրիստոնեական սիրով միության փոխարեն սեփական դավանաբանական ըմբռնումների պարտադրումը միայն հոգևոր-եկեղեցական առումով չէ, որ աղետաբեր է լինում:

Ժամանակին Բյուզանդական կայսրությունը իրեն ենթակա Արևմտյան Հայաստանի նահանգներին քաղկեդոնիկություն էր փորձում պարտադրել, փոխանակ դրանք ամրացնելու և ճակատի առաջին գիծ դարձնելու արդեն ուրվագծվող վտանգի առջև: Քաղաքական-կրոնական ազդեցության ոլորտներն ընդլայնելու բոլոր այս փորձերը, սակայն, ավարտվեցին նրանով, որ հայոց այդ նահանգների ձորերն ու կիրճերը այսօր իրենցում տակավին կրում են անթաղ աճյունները մեր նահատակների, իսկ Մեծն Կոստանդիոսի կառուցած քաղաքն էլ կորցրեց իր անունը, ուր անճանաչելիորեն ձևափոխվեցին նաև բյուզանդական հոյաշուք տաճարները:

Կ. Պոլսում գտնվելու ընթացքում Վեհափառ Հայրապետը մի փոքրիկ զբոսանավով անցավ նաև այն կղզու մոտով, ուր ինը տարի շարունակ Վաղես կայսեր հրամանով աքսորված էր հայոց Կաթողիկոսության գահին Գրիգոր Լուսավորչի տոհմի հինգերորդ գահակալը՝ Ներսես Մեծը:

Փավստոս Բուզանդը այս կղզու մասին գրում է, թե այնտեղ «ոչ խմելու ջուր կար և ոչ արմտիք, որովհետև անբույս ավազ էր միայն»: Ներսես Մեծից հետո Կ. Պոլիս կանչվեցին կամ կայսրության որևէ անկյուն աքսորվեցին նաև հայոց ուրիշ Հայրապետներ և թագավորներ: Այսօր ևս կա պատմիչի նկարագրած կղզին, սակայն հիմա միայն այդ կղզին չէ, որ քարքարոտ ու ամայի է. ցրվել է նաև Ներսես Մեծի հոտը այս տարածքին ժամանակին տիրող կայսրությունում, ուր և այժմ աքսորականի վիճակում են գտնվում հենց Բյուզանդական կայսրության ժառանգորդները:

Եվ ահա երջանկահիշատակ Վազգեն Առաջինի Կ. Պոլիս այցելությունից 35 տարի անց վերստին կայսրության երբեմնի մայրաքաղաքն է գնացել Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Գնացել է հավաստելու, որ եկել է արդեն քրիստոնեական սիրո ոգով գործակցելու ժամանակը, որ աշխարհի քրիստոնյաներին ոչ թե պետք է բաժանեն ծիսադավանական տարբերությունները, այլ միացնի Քրիստոսի Ավետարանը, հանուն մարդկության փրկության խաչի վրա մեր Տիրոջ թափած կենդանարար արյունը: Ինչպես Նորին Սրբությունն ասաց, «Միությունը կարծես վերակերտվել է Քրիստոսի խորհրդավոր մարմնի մեջ, որ է մեկ Եկեղեցին, ծառայելու համար նույն և մեկ մարդկության և ի սեր մեր հասարակաց վկայության ազդության և վավերականության աշխարհի մեջ»:

Նույն այս ոգին էր իշխում նաև Ժնև ու Փարիզ տրված այցելությունների ընթացքում:

Փարիզյան այցելությունը կարևորվեց նաև Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարության նախապատրաստական աշխատանքներին նվիրված խորհրդակցական գիտաժողովով, որին մասնակցեցին հայագետներ թե՛ Հայաստանից և թե՛ սփյուռքից, ինչպես նաև օտար գիտնականներ: Գիտաժողովի կարևոր յուրահատկություններից մեկը այն էր, որ ընթերցված քառասուն զեկուցումները ոչ միայն տաբեր գիտական հիմնախնդիրների էին վերաբերում, այլ նաև քննարկվում էր այն հարցը, թե ինչպես հայ ժողովրդի համար դարձակետային նշանակություն ունեցող այս իրողությունը նշվի միջազգային տարողությամբ՝ եկեղեցական, գիտական և ընդհանուր հոգևոր-մշակութաբանական տեսանկյուններից:

1700-ամյակի կարևորությունը ոչ թե մեր Եկեղեցու հնության, այլ նրա անցած 1700-ամյա ճանապարհի և այդ ճանապարհին ստեղծված արժեքների մեջ է: Գարեգին Վեհափառը քանիցս շեշտել է, որ 1700-ամյակը պետք է դառնա ոչ թե ինքնահպարտացման առիթ, այլ մի նոր հոգեգալուստ՝ լցվելու և վերապրելու մեր պապերի հավատով ու ստեղծած հոգևոր-մշակութային ժառանգությամբ: Միջազգային ընդգրկմամբ տոնելն էլ նշանակում է այդ ժառանգությունը ներկայացնել աշխարհին՝ շեշտելով հատկապես համաքրիստոնեական կարևորություն ու հետաքրքրություն ներկայացնող հարցերը: Միաժամանակ անհրաժեշտ է նշել մեկ կարևոր իրողություն. անգամ միջնադարյան դավանաբանական բնույթի ամենասուր վեճերի ընթացքում էլ Հայ Եկեղեցին իր վարդապետությունը և ըմբռնումները պաշտպանող հակաճառական ջատագովական բնույթի գործերի կողքին ստեղծել է ծիսական տարբերությունների քննության փոխարեն քրիստոնեական սիրո և միության ջերմ շնչով լեցուն գործեր թե՛ կիլիկյան Հայաստանում և թե՛ Արևելյան Հայաստանի վարդապետարաններում, որոնք այնքան համահունչ են մեր օրերում գնալով գերիշխող դարձող միջեկեղեցական հարաբերությունների ոգուն:

Հոգևոր այդ ժառանգության ներկայացումը աշխարհին դուրս գալով 1700-ամյակը միջազգայնորեն նշելու շրջանակներից, կներառվի և ընդհանուր էկումենիկ այն շարժման մեջ, որի զորացմանն ու ամրապնդմանը այսօր իր կարևոր ավանդն է բերում և մեր Եկեղեցին: